

12- թիվ համապատասխան հարցերի ցանկում, «ՀՀ Գրականության և Գրականության Միության» համապատասխան հարցերի ցանկում, «ՀՀ Գրականության և Գրականության Միության» համապատասխան հարցերի ցանկում, «ՀՀ Գրականության և Գրականության Միության» համապատասխան հարցերի ցանկում (1913-2003) թվականի 100-ամյա տոնակատարումը :

Այդ հիշարժան հորեյանը նշելու եւ մեր կողքին ապրած ու հայ գրականության մեջ իր մնայուն հետքը թողած անվանի գրողի հիշատակը խնկարկելու եւ մեծարելու նպատակով Վրաստանի գրողների միության եւ «Վրաստան» թերթի նախաձեռնությամբ նույն օրը Վրաստանի գրողների տանը կայացավ հանդիսույթ, որին իրենց մասնակցությունն էին բերել մայրաքաղաքի հայ ու վրացի գրասեր հասարակայնության ներկայացուցիչները, մարդիկ, որոնք ճանաչել են մեծ գրողին, վայելել նրա կենդանի, համով, հոտով խոսքը, նրա բարի ու մարդկային անհատականության բարեկամությունը, պարզապես եղել նրա ընթերցող-երկրպագուները:

Բացելով միջոցառումը, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին ներկայացրեց հայ գրողի կենսագրությունը եւ արժեւորեց նրա մեծ դերակատարումը հայ-վրաց գրական առնչությունների ամրապնդման գործում:

Այնուհետեւ Բենիկ Սեյրանյան մարդու, լրագրողի, գրողի ու ազգային-հասարակական գործչի մասին հանգամանալից խոսեց «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Նա հատկապես ընդգծեց այն իրողությունը, որ Բենիկ Սեյրանյանը թերթում աշխատել է մի ամբողջ կյանք՝ 70 տարի (1933-2003թթ.), որ հեռավոր 1933 թվականին նրան, 20-ամյա երիտասարդին ընդունեցին որպես թերթի հաստիքային աշխատակից եւ որ խմբագրությունում պահվող նրա աշխատանքային գրքույկում միայն մի գրանցում է՝ «Ընդունվել եւ մինչեւ կյանքի վերջը աշխատել է խմբագրությունում»:

Իր գրական ուսուցչի մասին հանգամանալից ու հուզիչ խոսեց բանաստեղծուհի, թարգմանիչ, «Կամուրջ» տարեգրքի խմբագիր Անահիտ Բոստանջյանը՝ Բենիկ Սեյրանյանի ստեղծագործությունը դիտարկելով որպես երեւույթ հայ գրականության մեջ, Բենիկ Սեյրանյանին ներկայացնելով որպես նովելի վարպետ, որպես դասական գրող, որի ստեղծագործությունը դեռ շատուշատ հետազոտությունների, ուսումնասիրությունների կարիք ունի՝ նրան իր արժանի տեղը հատկացնելու համար հայ գրականության անդաստանում:

Ընթերցվեցին նաեւ Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի, Արտավազ Սարեցյանի (Սողոմոնի) ուղերձները գրողի 100-ամյակի առիթով, ինչպես նաեւ Սեյրանյանին հիանալի ճանաչող գրողներ Բակուր Կարապետյանի, Լեւոն Մուրաֆյանի (Երեւան), Գարուշ Հարյանցի (ԱՄՆ) ողջույնի խոսքերը:

Բենիկ Սեյրանյան գրողին Դարի մարդ ու մեծ թփիլիսցի անվանեց ու թե՛ որպես գրողի, թե՛ որպես մարդու արժեւորեց անվանի բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնագարը: Սեյրանյանի մասին հուշեր պատմեցին, նրա վաստակը կարեւորեցին, վիրահայ գրականության մեջ ու ընդհանրապես համայնքում նրա անփոխարինելի դերի, նրա թատերգությունների, դպրոցական աշխարհի հետ նրա սերտ կապի մասին խոսեցին Թփիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության նախարարության աշխատակից Կարինե Մանուկյանը, ով առաջարկեց սահմանել Բենիկ Սեյրանյանի անվան գրական մրցանակ,

Եկարանյա մանկավարժներ Նորայր Բաղդասարյանը, Նազիկ Ռսկանյանը, Մանանա Կարապետյանը, բանսիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էմմա Ախտյանը, Վիրահայոց թեմին կից գործող «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի համակարգող Լեւոն Զիդիլյանը, այլք:

Միջոցառումից հետո ներկաները ուղղվեցին դեպի Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն՝ գրողի շիրիմի մոտ խնկարկելու նրա հիշատակը եւ ծաղիկներ դնելու նրա գերեզմանին: Այստեղ մատուցվեց հոգեհանգստի պատարագ, որը մատուցեց Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու քահանա Տեր Սամվել Թորոսյանը:

Հանդիսություններին մասնակցում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը:

000000 000000000000

000000000000 000000 000000000000